

Լաբորատոր աշխատանք №7

Ջրի և աղաջրի եռման ջերմաստիճանները

Աշխատանքի նպատակը

Չափել մաքուր ջրի և աղաջրի եռման ջերմաստիճանները

Անհրաժեշտ սարքեր և նյութեր

Փորձանոթ, ջերմաչափ, տաքացուցիչ սարք, աղ:



Աշխատանքի ընթացքը

1. Փորձանոթի մեջ լցնել մաքուր ջուր և տաքացնել մինչև եռալը:

Չափել եռացող ջրի ջերմաստիճանը:

Ջերմաչափի ցուցմունքը գրանցել աղյուսակում:

2. Ջրին ավելացնել մեկ թեյի գդալ աղ, խառնել մինչև աղի լրիվ լուծվելը:

Սպասել մինչև ջուրը կրկին կեռա:

Չափել եռացող ջրի ջերմաստիճանը:

Արդյունքը գրանցել աղյուսակում:

3. Եռացող ջրին ավելացնել ևս մեկ թեյի գդալ աղ:

Կատարել եռման ջերմաստիճանի չափում և արդյունքը գրանցել աղյուսակում:

4. Ջրին անընդհատ աղ ավելացնելու և ջերմաստիճանը չափելու գործընթացը շարունակել մինչև ստացվի աղի հագեցած լուծույթ(մինչև որ աղն այլևս չլուծվի ջրում):

5. Վերլուծել ստացված արդյունքները և անել եզրակացություններ:

Աղյուսակ

Հեղուկը	Մաքուր ջուր	Աղի ջուր 1 գդալ աղ	Աղի ջուր 2 գդալ աղ	Աղիջուր հագեցած լուծույթ
Եռման ջերմաստիճանը				